ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՍՍՀ ԳԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՎ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՈՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

1972 թ. հոկտեմբերի 25—27-ը ՀՍՍՀ ԳԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը և հոբելյանական նստաշրջանը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին:

Ընդհանուր ժողովը և հոբելյանական նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Ներածական խոսքով հանդես եկավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը, որը մասնավորապես կանգ առավ սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի ասպարեզում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների վրա: Անգնահատելի է ՍՍՀՄ ԳԱ մշտական ու հսկայական օգնությունը մեր հանրապետությունում գիտության համակողմանի զարգացման գործին, որի շնորհիվ մեր ակադեմիան դարձել է երկրի գիտական խոշոր կենտրոններից մեկը:

Այնուհետև «Ժողովուրդների մեծ ընտանիքի գիտությունը» զեկուցմամբ հանդես եկավ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: ՍՍՀՄ կազմավորումից ի վեր անցած 50 տարում, ընդգծեց նա, հայրենական գիտությունը հսկայական թռիչք գործեց, որին մեծապես նպաստեց գիտության խելացի, համաչափ զարգացումը երկրի բոլոր շրջաններում, աշխատանքի յուրահատուկ բաժանումը տարբեր հանրապետությունների գիտնականների միջև՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գիտական կոլեկտիվի հնարավորությունները: Եթե ցարական Ռուսաստանում գիտական հաստատությունները ու կադրերը գտնվում էին կենտրոնական մարզերում, ապա սովետական իշխանության հաստատումից հետո կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միջոցներ ձեռնարկեցին ամենուրեք զարգացնելու հետազոտական միտքը, ստեղծելու ազգային կադրեր, գիտատեխնիկական բազա: Այդ հոգատարության և ուշադրության արգասիքն էր գիտական խոշոր կենտրոնների ստեղծումը երկրի բոլոր վայրերում, այդ թվում՝ Անդրկովկասում:

Ակադեմիկոս Պ. Ն. Պոսպելովի զեկուցումը նվիրված էր «ՍՍՀՄ կազմավորման 50 տարին ինտերնացիոնալիզմի լենինյան սկզբունքների հաղթանակն է» թեմային: —Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը,— ասաց նա,— քաղաքական պայմաններ ապահովեց, իսկ արտադրության միջոցների սոցիալիստական սեփականության հաստատումը տնտեսական նախադրյալներ ստեղծեց մեկ միասնական միութենական պետության մեջ երկրի բոլոր ժողովուրդների համախմբման համար: ՍՍՀՄ 50 տարին կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակն է, նրա սկզբունքների հետևողական իրականացման արդյունքը: Սովետական Հայաստանի օրինակով կարելի է տեսնել, թե ինչպես ժողովուրդների բարեկամության կենարար մեծ ուժը և լենինյան իմաստուն ազգային քաղաքականությունը հանգեցրել են հանրապետության գիտության, մշակույթի ու տնտեսության չտեսնված ծաղկման: Զեկուցողը մանրամասնորեն խոսեց այն մասին, թե Սովետական Միության բոլոր ժողովուրդները ինչպես են կատարում մեր երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման հոյակապ ծրագիրը:

Իր ելույթում ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ի. Ն. Վեկուան պատմեց եղբայրական վրաց ժողովրդի գիտական նվաճումների և անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների գիտնականների համագործակցության մասին: Նա ասաց, որ երեք հանրապետությունների ակադեմիաների ղեկավարությունը ամեն ինչ անում է, որպեսզի բարեկամության ու համագործակցության ավանդույթները այսուհետև էլ ամրապնդվեն ու զարգանան, նպաստեն գիտական հրատապ պրոբլեմների լուծմանը:

Այնուհետև ելույթ ունեցավ Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Մ. Ս. Կաշկայը, որը բերեց բազմաթիվ փաստեր հանրապետությունում գիտության զարգացման, ինչպես նաև հայ և ադրբեջանցի գիտնականների գործարար համագործակցության մասին:

Իր զեկուցման մեջ ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Տ. Ս. Խաչատուրովը արծարծեց ՍՍՀՄ

Ժողովրդական տնտեսության պլանավորմանը նվիրված մի շարք հարցեր: Այժմ, ասաց նա, մեր երկրում ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների ոգով տեղի է ունենում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության պլանավորման կատարելագործում: Մեր երկիրը ձեռնամուխ է եղել ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր պլանի մշակմանը, որը բելադրվում է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման շահերով:

«ՍՍՀՄ զարգացումը և մարդկության ապագան» թեմայով հանդես եկավ ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Յ. Ա. Ստեփանյանը: Նա ընդգծեց, որ Սովետական Միությունը պատմության մեջ ազգերի առաջին համերաշխ միությունն է: ՍՄԿԿ Լենինյան ազգային քաղաքականության մեծագույն նվաճումներից մեկը ՍՍՀՄ ժողովուրդների ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթների զարգացումն ու փոխադարձ հարստացումն է: Զեկուցողը քննադատության ենթարկեց ազգային հարցի հակամարքսիստական մեկնաբանությունները:

Նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը («ՍՍՀՄ կազմավորումը և Սովետական Հայաստանի տնտեսական ծաղկումը»), փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ս. Թովմասյանը («Գիտատեխնիկական հեղափոխությունը և ազգային հարաբերությունների զարգացումը ՍՍՀՄ-ում»), Վրացական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Շ. Վ. Զիծիգուրին («Լեզվաբանության զարգացումը Վրացական ՍՍՀ-ում»), բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Կ. Դարոնյանը («Սովետական բազմազգ գրականության զարգացման միասնությունը»), ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը («Սովետական Ռուսաստանի դերը ՍՍՀՄ կազմավորման գործում»), ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը («Լենինյան ազգային քաղաքականությունը և սովետական պետականության կազմավորումը Անդրկովկասում»), ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ա. Գալոյանը («Ազգային հարցի լենինյան լուծումը ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության հիմքն է»), պատմական գիտությունների դոկտոր Փ. Ա. Ազիզբեկովան («Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը»):

ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովն ու հոբելյանական նստաշրջանի աշխատանքները ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Նստաշրջանին ներկա էին ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ կառավարության ղեկավար աշխատողներ և Հայաստանի ու հարևան հանրապետությունների ականավոր գիտնականներ:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ